ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.10.2023Թ. ԿՆՔՎԱԾ N «ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2023/80» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» նոյեմբերի 2023թ.

«Հայանտառ»ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ս.Մարկոսյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Կարեն Ռաֆիկի Մանասյան» ԱՁ -ն (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Կողմերի միջև 01.06.2023թ. կնքված N «ՀԱ-ԳՀԱՇՁԲ-2023/80» պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 8.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին

ա/ Պայմանագրով սահմանված աշխատանքների ընդհանուր գումարը՝ 2470000/ երկու միլիոն չորս հարյուր յոթնասուն հազար/ ՀՀ դրամ ավելացնել 247000 (երկու հարյուր քառասունոթ հազար ՀՀ դրամով) և պայմանագրի կատարման վերջնական գին սահմանել 2717000 (երկու միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ:

բ/ Հաստատել ավելացված աշխատանքների ծավալաթերթ նախահաշիվը համաձայան հավելված 1-ի:

գ/ Հաստատել աշխատանքի կատարման նոր վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

դ/ Աշխատանքների կատարման համար սահմանել ժամկետ՝ 10 օրացուցային օր:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը թողնել անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք. Երևան, Ա. Արմենակյան 129
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900018002270
ՀՎՀՀ 02512343
Սնակ Մարկոսյան

/ ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կարեն Մանասյան ԱՁ
Շիրակի մարզ գ. Փանիկ 29 փ , 1-ին փակ 7
ՀՎՀՀ 57463805
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2052832527601001

/ստորագրություն/
Կ.Տ